ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐՔՍԻԶՄ

Վարդան Ասցատրյան[*]

Մեր աչքի առաջ աշխարհում արագացող տեմպերով տեղի է ունենում մարդկային, քաղաքակրթական արժեքների գլոբալ փոփոխություն, ինչը կատարվում է ավանդական արժեքները վերացնելու ճանապարհով: Փոխարենն առաջարկվում է նորացված աթեիստական գաղափարախոսություն:

Այս ճանապարհին որպես գործիք է ընդունվել «քննադատական տեսությունը», որով հիմնովին քննադատության է ենթարկվում ավանդական ամեն բան, մասնավորապես՝ ընտանիքը, ավանդական մշակույթն ու սովորույթները, ազգային-պատմական հերոսները, ազգային հիշողությունը, ազգային եկեղեցին ու դավանանքը:

Մարդիկ կորցնում են բարոյական կողմնորոշիչը, նրանց մեջ հաստատվում են օտարացվածության ու միայնակության զգացողությունը, հուսահատությունը: Նրանք ուրախություն են փնտրում ալկոհոլի, թմրադեղերի, պոռնոգրաֆիայի, սեքսի մեջ: Որպես հետևանք՝ զգալիորեն աճում է ամուսնալուծությունների, արտամուսնական ծնունդների, աբորտների, անչափահասների միջավայրում ինքնասպանությունների, բանտարկյալների, թմրամոլների թիվը:

Արդյունքում՝ փորձ է արվում վերացվող հազարամյա ազգային արժեքների փոխարեն կերտել նորերը: Սակայն հարց է ծագում. որտե՞ղ են դրանց հիմքերը, եթե ոչ՝ կրոնական դավանանքում, եթե ոչ՝ անցյալում …

[*] ՀՀ կառավարության Ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչության պետ:

Ամերիկյան երազանքի վախճանի սկիզբը. շրջադարձային 60-ականը

«Տեսէ՛ք, զգույշ եղէք սադուկեցիների և
փարիսեցիների խմորից…» [1]:

1960թ. ԱՄՆ պատմության մեջ առաջին նախագահը ձայների մեծամասնություն հավաքեց աֆրոամերիկացիների շնորհիվ: Դրան նպաստեց պատահականությունը: 1960թ. հոկտեմբերին Մարտին Լյութեր Քինգը ձերբակալվել էր երթևեկության կանոնների խախտման համար և կարճ ժամկետով դատապարտվել ուղղիչ աշխատանքների: Նրա կինը վախենում էր, որ Լյութերին կարող են սպանել ճամբարում և այդ մասին տեղեկացրել էր նախագահի թեկնածու Ջոն Քենեդուն: Քինգին ազատում են ճամբարից: Այս նորությունը տարածվում է ամբողջ Ամերիկայով մեկ, և արդյունքում՝ ողջ սևամորթ բնակչությունը քվեարկում է հոգուտ Քենեդու:

Արմատական պահպանողականները Քենեդուն անվանեցին «սպիտակ ռասայի դավաճան», «հանուն ձայների ծախված», հայտարարեցին, թե «վատ սկսեց, վատ էլ կվերջացնի»:

Սրան հակառակ՝ երկրի բնակչության 41%-ը կազմող երիտասարդությանը ձեռնտու էր նոր նախագահը. երիտասարդ, կրթված, առաջավոր, հրաշալի դիվանագետ, միշտ համարում էր, որ բոլոր մարդիկ՝ անկախ ռասայից, հավասար են: Երիտասարդությունը ձգտում էր հրաժարվել վատ ժառանգությունից՝ Ռուզվելտի դավաճանությունից, Փերլ Հարբորի սպանդից, Հիրոսիմայի և Նագասակիի ատոմային պայթյունից, Հարավային Կորեայի պատերազմից և այլն: Այդ պատճառով 1960 թվականից երիտասարդությունն ակտիվ պայքարի մեջ մտավ հին կարգերի դեմ:

Աջ պահպանողական երիտասարդությունը կասկածի տակ էր դրել մեծ քաղաքականությանը վերաբերող հարցերում գալիք առաջնորդների ողջամիտ որոշումներ կայացնելու ունակությունը և աջ ու ձախ քննադատում էր ամենքին ու ամեն ինչ: Բերքլիի ու Կալիֆորնիայի ձախ կողմնորոշում ունեցող հարյուրավոր ուսանողներ բացահայտորեն մեղադրում էին ամերիկյան հակակոմունիստական դոգման, որին հենվում էր ԱՄՆ ամբողջ արտաքին

ու ներքին քաղաքականությունը: Ըստ նրանց՝ ամերիկյան քաղաքական կյանքը բաց է ինքնավարության նոր գաղափարների ու հայեցակարգերի համար, հետևապես՝ քաղաքական որոշումները պետք է ընդունվեն ամերիկացիների մեծամասնության համաձայնությամբ, այլ ոչ թե բխեն միայն կառավարությունից ու կոնգրեսից:

Սակայն բողոքի ամենամեծ ալիքը բարձրացրին աֆրոամերիկացիները, որոնք նոր նախագահին շնորհավորում էին գրեթե միաժամանակյա հարյուրավոր նստացույցերով: Նրանք անկեղծորեն հավատում էին, որ Քենեդին իրենց կհասկանա:

Բայց երիտասարդության միջավայրում 43-ամյա նախագահի նման հանրաճանաչությունը դուր չէր գալիս կառավարության, ԿՀՎ և Պենտագոնի որոշակի շրջանակների: Նրանք մտահոգ էին, որ այսպես շարունակվելու դեպքում, մի քանի տարի անց սևամորթները կտիրեն երկրին:

«Իշխանության իրական կնիքներն ու բանալին ունեցողների» առջև կանգնած էին մի քանի լուրջ հարցեր.

- ինչպե՞ս և ինչո՞վ շեղել երիտասարդներին իրենց որդեգրած նպատակներից,
- որտեղի՞ց գտնել անհրաժեշտ դեղատոմս և ինչպե՞ս ճշտորեն օգտագործել այն՝ կանխելու համար ԱՄՆ-ում սկիզբ առած հեղափոխական ալիքը,
- ի՞նչ անել, որպեսզի հեղափոխական գաղափարներն այլևս երբեք ծնունդ չառնեն գալիք սերունդների ուղեղում:

Այս բոլոր խնդիրները պահանջում էին արագ ու արդյունավետ որոշումներ, թեև ակնհայտ էր, որ խնդիրն անհնար է արագ լուծել: Անհրաժեշտ էր *«մշակութային հեղափոխություն»*, սակայն այնպիսին, որը կմերկացներ երիտասարդ սերնդի կրքերը, առաջին պլան կմղեր ֆիզիկական ու ֆիզիոլոգիական կարիքներն ու ցանկությունները, որոնք բխում են ոչ թե առողջ բանականությունից, այլ ենթագիտակցությունից: Պարզ ասած՝ անհրաժեշտ էր բացասական նշանով մշակութային հեղափոխություն, որը լիովին կքայքայեր ու ցիրուցան կաներ ազգային միասնականությունը,

երկրում առաջ կբերեր մասնակի (կամ կառավարելի) քաոս: Իսկ դրա համար պետք էր հակադրվել հասարակության *ավանդական պուրիտանական հզոր կարգերին*:

Նկատենք, որ ԱՄՆ-ում ամենամեծ տարածումն ունեցող պուրիտանիզմը բողոքականության անգլիական տարբերակն է: Ըստ պուրիտանական սկզբունքների, ընտանիքն ու կրոնն առաջնային տեղ են գրավում: Այն պահանջում էր արժանապատիվ վարք հասարակության մեջ, ազնիվ արարքների կատարում, ձգտում ինքնակատարելագործման: Ամերիկան պուրիտանիզմը ժառանգեց հիմնադրման սկզբից ևեթ: Պուրիտանիզմը ԱՄՆ-ում պահպանվում է օրենքների լայն ցանցով ու հանդիսանում է վարքի բարոյական նորմերի հիմքը ընտանիքում և հասարակության մեջ: Նկատենք, որ հասարակության միկրոմակարդակում իրավիճակը նույնն է նաև այսօր, որի վկայությունն են *«Gallup»* ծառայության անցկացրած հարցումների արդյունքները: Համաձայն հարցումների արդյունքների[1], ամերիկացիների մեծ մասը չի ընդունում հասարակության մեջ նոր տարածում գտած մի շարք երևույթներ: Հարցվողների 92%-ը «բարոյապես արդարացված» չի համարում ամուսնացած տղամարդու և կնոջ դավաճանությունը, 91%-ը՝ բազմակնությունը, 88%-ը՝ մարդու կլոնավորումը, 80%-ը՝ ինքնասպանությունը, 63%-ը՝ կենդանիների կլոնավորումը, 56%-ը՝ աբորտն ու էվթանազիան, 40%-ը՝ արտամուսնական սեռական հարաբերությունները, 45%-ը՝ ամուսնական կապից դուրս երեխաների ծննդաբերությունը, 41%-ը՝ միասեռ սեքսուալ կապերը:

Այս համակարգը ջախջախելու և վերափոխելու նպատակով վերևներում որոշված «մշակութային հեղափոխությունը» հանձնարարվեց ի կատար ածել *Հոլիվուդին*: Աշխույժ մենեջերներն անմիջապես զբաղվեցին երաժշտության նոր ուղղությունն ու *«հիպիների շարժումը»* երկիր ներմուծելով: Մենեջեր Բ.Էպշտեյնը 60-ականների սկզբում Ամերիկա հրավիրեց *«Բիթլզ»* խմբին, որը շրջեց բոլոր նահանգներով՝ տալով տասնյակ համերգներ: Նրանց զուգահեռ՝ երկրում հյուրախաղերով հանդես էին գալիս տասնյակ տեղական խմբեր (*Drifters, Monks, Turtles*): 50-ականների դասականների

[1] «Седмица.ру», 3 հուլիսի 2009թ.:

հետ մեկտեղ՝ ռադիոյով ու հեռուստատեսությամբ սկսեցին պարբերաբար թողարկել նաև նոր ուղղության ավանգարդային երգեր: Սակայն երիտասարդությունը պատրաստ չէր այս փոփոխություններին, և նոր ուղղության երաժշտությունը դեռևս մեծ հաջողության չէր հասնում: Շարունակում էին առավել հանրաճանաչ մնալ 50-ականների ոճի երգիչները՝ Է.Փրեսլին, Սեմ Քուկը, Մարտի Ռոբինսը և այլք: Իսկ կառավարությունը չէր նահանջում: «Մշակութային հեղափոխության» զարգացման մեջ ներքաշվեցին քարոզչության բոլոր տեսակները: Գրախանութների դարակներում արդեն իսկ տեղ գտած *«Փլեյբոյ»*-ի ու *«Փենթհաուզ»*-ի կողքին հայտնվեցին նմանատիպ նորանուն բազմաթիվ ամսագրեր: Գրաքննությունը հրատարակչություններին թույլ էր տալիս հրատարակել սեռական ժանրի գրքեր, որոնք քարոզում էին մինչամուսնական սեռական հարաբերություններ:

Հեռուստատեսության էկրաններին ապրանքներն ու հյութերն առավել հաճախ էին գովազդվում երկարամազ տղաների կողմից, և հայտարարվում էր. «Խմեք միայն մեր գարեջուրը, երկարացրեք ձեր մազերը, և բոլոր աղջիկները ձերը կլինեն»: Կանայք նույնպես չէին անտեսվում. ամսագրերի գովազդային էջերին արդյունաբերական ապրանքներն առավել հաճախ էին ուղեկցվում մերկացված կրծքով ու կիսամերկ շիկահեր կանանց նկարներով: Ի լրումն, երգիչ Չաբի Չեքերը հեռուստատեսությամբ հանդես եկավ *«Թվիստ»* երգով՝ պարելով միանգամայն նոր՝ այն ժամանակների համար վայրի ոճով: Դա առաջին լուրջ հարվածն էր ավանդական բարոյական նորմերին: Բացահայտ սեքսուալ ենթատեքստով այդ պարը դարձավ ամերիկյան ավանդական կայուն ընտանիքի վախճանի սկիզբը: Ուշագրավ է, որ այդ երգն ու պարը պատրաստվել էին դեռևս 1957 թվականին, սակայն ամերիկյան ցենզուրան արգելել էր դրանք:

Հարկ է նկատի ունենալ, որ Ամերիկայում ոչինչ տեղի չի ունենում առանց պետության վերահսկողության և հատուկ ծառայությունների «ղեկավարման»: Եթե անգամ այս փաստն անտեսենք, ապա չէին կարող չգործել ավանդական պաշտպանական համակարգը, խիստ պուրիտանական գրաքննությունը և պահպանողական կարգերը, կրոնական կրթությունն ու դաստիարակությունը, որոնք թույլ չէին տա այսպիսի արմատական փո-

փոխություններ գրականության, արվեստի, գովազդի և այլ ոլորտներում, այն էլ ինչ-որ 10 ամսվա ընթացքում: Այսինքն՝ անհրաժեշտության դեպքում այս շարժումը հենց սկզբից կտապալվեր, և կոչնչացվեր ամբողջ նեգրական շարժումը՝ ինչպես հնդկացիներինը: Սակայն հասարակության սանձազերծումը դյուրին է դարձնում իր իսկ հետագա ճնշումն ու ստորացումը: Այս պլանն ի կատար ածելու համար պետք էր ոչ թե Քենեդին, այլ մի խամաճիկ, որը հլու կամակատար կլիներ:

Պետության կողմից ստեղծված այս իրավիճակում երկրում ի հայտ եկան նաև այլ հոսանքներ, որոնք դեռևս հեղափոխական բնույթ էին կրում և կապ չունեին Հոլիվուդի քարոզչության հետ: Սեգրեգացիայի դեմ պայքարի գործընթացում ի հայտ եկավ *«Բիթնիկների շարժումը»:*

«Բիթնիկների շարժումը»[1]

50-ականների վերջին սևամորթ նստացուցարարներին սկսեցին միանալ նաև սպիտակամորթ ուսանողներ: Նրանք կրում էին հնամաշ, ճմրթված, պատառոտված հագուստներ՝ այդպիսով խորհրդանշելով ստրուկների աղքատությունը: Նրանց որդեգրած ոճի պարտադիր հայտանիշներից էին բերետը, սև ակնոցը, բոնգն ու թմբուկը: Թմբուկների ռիթմը ոգևորում էր ցուցարարներին:

«Բիթնիկներ» բառն առաջացել է անգլերեն *«beat generation»* արտահայտությունից, որը նշանակում է ծեծված, կոտրված, հոգնած սերունդ: Այն ԱՄՆ-ում 1950-60-ականներին ձևավորված գրական երիտասարդական շարժում էր, որը հռչակում էր կամավոր աղքատությունը, թափառաշրջությունը, էրոտիկ ազատությունը, անարխիկ գեղոնիզմը, սոցիալական խնդիրներից հեռացումը, ձեն-բուդդիզմով տարվելը: Շարժումը ծագել է հետպատերազմյան տարիներին, երբ միմյանց հանդիպեցին գրողներ Ջեկ Կերուակը, Ուիլյամ Բերոզը և Ալեն Գինզբերգը, որոնց ավելի ուշ միացավ նաև Նիլ Քեսեդին: Նրանք միասին ձևավորեցին գրական մի խմբի միջուկը, որի ստեղծագործությունը դուրս է գալիս գոյություն ունեցած դրվածքներից ու պաշտոնական արվեստի սահմաններից:

[1] http://www.absolutology.org.ru/beat.htm; http://yoki.ru

Շարժումը սկիզբ է առել Կալիֆոռնիայում, այն շարունակ համալրվում էր միջին դասի երիտասարդությամբ, որոնք իսպառ ձանձրացել էին առօրյա կյանքից: Այն այդքան էլ խաղաղ շարժում չէր, ինչպես թվում էր: Հակառակը, բավական ագրեսիվ տրամադրված գաղափարական խումբ էր, որը համակրում էր միաժամանակ մարքսիզմին, ռուսական անարխիզմին ու տրոցկիզմին: Նրանք բողոքում էին ամերիկյան ռազմական քաղաքականության և ամերիկյան ապրելակերպի դեմ:

Բիթնիկները որպես հասարակական բարոյականության դեմ ապստամբության ամենաարմատական ձև էին ընտրել *ոչ ավանդական սեռական կողմնորոշումը,* որը մոդայիկ էր դառնում երիտասարդ ինտելեկտուալների շրջանում: Այս ամենը նրանք ամբողջացնում էին *ձեն-բուդդիզմի* մեջ խորասուզվելով:

Ավելի ուշ ի հայտ եկավ *ԼՍԴ*[1]-ն: Նոր «հրաշք-թմրադեղը» սկսեցին արագ տարածել «փորձնական» փաթեթներով, որոնք անվճար բաժանվում էին քոլեջներում և «ռոք» համերգներում՝ ԱՄՆ ողջ տարածքում: Այդպիսով, հենց *ԼՍԴ*-ն դարձավ թմրադեղերի լայն տարածման կատալիզատոր: Բիթնիկները սկսեցին սեփական գիտակցության ընդլայնման փորձեր անել: Ի վերջո, այդ ամենը վերածվեց *հիպիների շարժման*: Հետագայում, հասունանալով, հիպիները դարձան «հասարակության պատվավոր անդամներ»՝ յապիներ, որոնք մտահոգվեցին իրենց մարմինը պահպանելու և դրա նկատմամբ հոգատար լինելու հարցերով: Այս շարժումը մեծ ազդեցություն ունեցավ համաշխարհային մշակույթի վրա:

Ուշագրավ է, որ բիթնիկներն են եղել ԱՄՆ *փողոցային ժարգոնի* հիմնադիրը: *Թինեյջերների* կողմից օգտագործվող բազմաթիվ բառեր շրջանառության մեջ են դրել բիթնիկները՝ դրանք փոխառելով ջազից:

Հիպիների ձևավորած շարժումներից է *«Նոր դարաշրջան»* (կամ «Նոր դար», *«New Age»*) շարժումը:

[1] *ԼՍԴ*-ն լիզերգինային թթու է, որ արտադրվել է շվեյցարական *SANDOZ* դեղագործական ընկերության կողմից, այն բանից հետո, երբ վերջինիս քիմիկոսներից մեկը՝ Ալբերտ Հոֆմանը, հայտնագործեց գիտակցությունը փոփոխող ամենահզոր թմրադեղի՝ էրգոտամինի սինթեզը:

«Նոր դար» շարժումը

60-ականների թմրադեղային երիտասարդական հակամշակույթը և հաշիշի, *ԼՍԴ*-ի, մեսկալինայի և հալյուցինոգեն սնկերի միջոցով ձեռնարկված «գիտակցության ընդլայնման» զանազան փորձերը «Նոր դարի» կարևոր տարրերից են: «Նոր դարը» Հյուսիսային Ամերիկայում նորաթուխ և զարգացող հավատալիքների համակարգ է, որը կազմված է հազարավոր ինքնուրույն (հաճախ՝ հակասական) հավատալիքներից, աղանդներից, կազմակերպություններից և իրադարձություններից: «Նոր դարն» իր աստվածաբանությունը հիմնականում փոխառել է արևելյան պանթեիստական կրոններից, իսկ պրակտիկան՝ 19-րդ դարի արևմտյան օկուլտիզմից: «Նոր դար» եզրն օգտագործվում է որպես մի ընդհանուր տանիք, որով բնութագրվում են բոլոր կազմակերպությունները, որոնցից յուրաքանչյուրն ունի հետևյալ հավատալիքներից մեկը կամ մի քանիսը. 1. ամեն ինչ մի է, բոլոր իրողություններն ամբողջի մասն են կազմում, 2. ամեն ինչ Աստված է, և Աստված ամեն ինչն է, 3. մարդը Աստված է կամ՝ Աստծո մասը, 4. մարդը երբեք չի մահանում, այլ շարունակում է ապրել վերամարմնավորման միջոցով, 5. մարդը կարող է՝ մտածողության վերափոխման կամ մտածողության վիճակի փոփոխման միջոցով, ստեղծել իր սեփական իրականությունը և/կամ արժեքները:

Առավել խիստ իմաստով այն ներկայանում է որպես որոշակի գաղափարական հիմք ունեցող ընդարձակ օկուլտային նեոհեթանոսական շարժում: Ավելի լայն իմաստով «Նոր դարը» ներկայանում է որպես սոցիոմշակութային ֆենոմեն, որպես ժամանակակից «հետքրիստոնեական» քաղաքակրթության գաղափարական հիմք: Այս իմաստով գրեթե բոլոր տոտալիտար (քայքայիչ) աղանդները դրա առանձին բաղկացուցիչ մասերն են, հիմնվում են շարժման գաղափարների մի մասի վրա:

«Նոր դար» շարժումը մերժում է դատավոր Աստծո գոյությունը, կեղծ ու վնասակար է համարում մեղքի զգացողությունը: Համարում է, որ ցանկացած վատ արարք ընդլայնում է մարդու հասկացողությունը: Վերամարմնավորման մասին իր ուսմունքով հաստատում է իր անբարոյակա-

նությունը, քանզի այն արգելում է օգնել տանջանքներ կրողին: Այստեղ Հակաքրիստոսին համարում են որպես համաշխարհային կրոններից մեկում գործածվող վախի համակարգ և հորդորում են չվախենալ նրանից, քանի որ առջևում «լուսապայծառ ապագա» է սպասվում:

Չնայած շարժմանը պատկանող յուրաքանչյուր խումբ ունի փոխակերպման համար գործածվող իր անհատական և մյուսներից տարբերվող հնարանքները, խմբերի նպատակը մշտապես մեկն է. փոխակերպել անհատականությունը, իսկ հետո փոխակերպել աշխարհը: Երկու հիմնական սկզբնադրույթներից մեկը նորդարյան (կամ պանթեիստական) մոնիզմն է՝ հավատն առ այն, որ ամեն ինչ միասնական է: Այսինքն՝ առանձին էակների (Արմենի և Սուրենի, Սուրենի և ծառի, Աստծո և Սուրենի) միջև եղած տարբերությունները միայն թվացյալ են, իրականում դրանք չկան: Մոնիզմի այս հայեցակարգում անհատականության համար տեղ չկա: Նրանք հավատում են, որ մարդուց դուրս գոյություն չունի Աստված, քանի որ մարդն ինքն է Աստված: Սա էլ երկրորդ պոստուլատն է:

«Նոր դար» շարժումը հավատում է այն բանին, որ ժամանակակից մարդկությունն ապրում է երկրի նոր դարաշրջան մտնելու անցումային փուլը: Չկան դարաշրջանին (քրիստոնեությանը) փոխարինելու է գալիս Ջրհոսի դարաշրջանը, որտեղ ամեն բան պետք է նորանա և փոխվի: Ուստի, պահանջվում են նոր գաղափարներ և նոր մարդիկ, ովքեր չեն ճանաչում և ոչ մի հեղինակություն, «հանդուրժողաբար» են վերաբերվում բոլոր կրոններին:

Առաջարկվում է էկոլոգիական վերաբերմունք ունենալ մարմնի, բնության նկատմամբ: Շարժման կարգախոսներից է հոգու, ոգու և մարմնի ամբողջականությունը, որտեղից էլ առաջանում է նրա «Հոլիստիկ» կամ թարգմանաբար՝ «Ամբողջականության» շարժում անվանումը:

Նորդարականները՝ մարքսիստների նմանությամբ, մոլորակը դրախտի վերածելը կապում են հեղափոխության հետ, միայն թե այս դեպքում՝ ոգեղեն ոլորտում, որը նրանք հասկանում են որպես անհրաժեշտությունների թագավորությունից պոկվելն ու ազատության թագավորություն թռիչք կատարելը:

Մարքսիստների նման՝ նորդարականները ևս պատրաստ են քանդել «հին աշխարհի» մնացորդները: Բոլորովին պատահական չէ և այն, որ շատ օկուլտիստներ, որոնք եղել են «Նոր դարի» նախակարապետներն ու գաղափարախոսները, իրենց ժամանակին ուրախությամբ ողջունել են Ռուսաստանում բոլշևիկների իշխանության գալը: Այսպես, «Ագնի յոգա» կրոնաքաղաքական աղանդի հիմնադիր, օկուլտիստ Ն.Ռերիխը Լենինին ուղղված իր ողջույնի նամակում գրել է. «Հիմալայներում մենք տեղեկացանք Ձեր գործերի մասին: ...Դուք վերացրիք եկեղեցին, որը դարձել էր ստի և նախապաշարումների սերմանող: ...Դուք ընդունեցիք մասնավոր սեփականության ոչնչությունը: Դուք կանխատեսեցիք համայնքի էվոլյուցիան...»:

Ասվածը հաստատում են նաև «գլոբալ մաքրագործումների» մասին բազմակարծության ու հանդուրժողականության կողմնակից նորդարականների ծրագրերը, որոնք պետք է ուղեկցեն «նոր դարաշրջանի» հաստատմանը: Այս մաքրագործումների ընթացքում կկործանվեն ոչ միայն նոր ռեժիմի գիտակից հակառակորդները, այլ բոլոր նրանք, ովքեր հեռու են «Նոր դարի» գիտակցությունից: Այսպես, ոգիների հետ հաղորդակցվող (ոգեհարցուկ, կոնտակտյոր) Ալլա Տեր-Հակոբյանը գրում է. «Քաղցկեղային մարդաբջիջները... տիեզերական աղբը, իրենց զարգացման մեջ փակուղու հասած և իրենց ներքին հնարավորությունները չիրացրած հոգիները ոչնչացվելու են» [2, c. 16]:

«Նոր դար» շարժման կարևոր դրսևորումներից է լեզվամտածողության փոփոխությունը: «Բիթլզ»-ի հետ միասին ԱՄՆ-ում գործածության մեջ մտցվեցին հորինված նոր բառեր ու արտահայտություններ, ինչպես, օրինակ, «ռոք», «փոփ» «թինեյջեր» (դեռահաս), «քուլ» (ռուս. *«клевый»*) և այլն, որոնք հետագայում գործածվեցին «ռոք երաժշտության» սիրահարների միջավայրում: Այս մոդայիկ առանցքային բառերը ստեղծեցին սոցիումից բաժանված երիտասարդական նոր խումբ, որին՝ սոցիալական ինժեներիայի և վերամշակման միջոցով, հարկադրեցին հավատալ, որ «Բիթլզ»-ը, հիրավի, իրենց սիրած խումբն է: Այս բառերը նախատեսված էին նոր նպատակային խմբի՝ ամերիկյան երիտասարդության զանգվածային կառավարման համար:

60-ականներին «բիթնիկ» հասկացությունը ԽՍՀՄ եկավ որպես լոկ երաժշտական նոր ուղղություն, որը, իհարկե, սխալ էր: Դա այդպես էր, քանի որ երկաթյա վարագույրներն այն հաղթահարեց «Ամերիկայի ձայն» ռադիոկայանի միջոցով, որին ձեռնտու չէր բիթնիկներին ներկայացնել որպես պրոսոցիալիստներ ու հեղափոխականներ: Խորհրդային կողմն էլ այն ըստ էության չմեկնաբանեց՝ հավանաբար իր շահերն ունենալով:

Շարունակելի

Աղբյուրներ և գրականություն

1. Մատթէոս, 16:6, Նոր Կտակարան, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1992թ.:
2. *Тер-Акопян А.,* Контактеры дней Апокалипсиса, М., 1992.
3. *Michael Loewy, Georg Lukdcs*: from Romanticism to Bolshevism (Patrick Caniller, Translator (London: NLB, 1979).
4. *Arnold Beichman,* "In Search of Civil Society", Washington Times, February 3, 1993.
5. *Charles A. Reich,* The Greening of America (New York: Bantam Books, 1971).
6. «Политическая мысль второй половины XX века», составитель В.А.Мальцев, Перм, 1999.
7. *William Lind,* "Turn Off, Tune Out, Drop Out: A Cultural Conservative's Strategy for the 21st Cent-ury", Against the Grain, Free Congress Foundation, Washington, D.C., 1998.
8. *Herbert Marcuse,* The Carnivorous Society; cited by Raehn.
9. Broadcast of American Dissident Voices, "The NEA's Anti-American Agenda Threatens Our Nation". March 13, 1993.
10. *Walter Adolphe Roberts,* "Birth Control and the Revolution", Birth Control Review, June 1917.
11. *Cooper F.,* "The Right Agenda: Recapture the Cultures, American Arts Quarterly, Spring/Summer 1990.
12. *Arthur Schlesinger, Jr.,* "Speaking Up", Los Angeles Times, February 7, 1992.
13. *Nadia Rybarova,* "Czech President Vaclav Havel: Man May Have Lost God", Associated Press, September 4, 1997.
14. Excerpts from Supreme Court Opinions on Prayer", New York Times, June 20, 2000.
15. *Jim Nelson Black,* When Nations Die (Wheaton, 111.: Tyndale House Publishers, 1994).
16. *William J. Bennett,* Index of Leading Cultural Indicators (New York: Broadway Boob, 2000).
17. *Anthony Harrigan,* "The New Anti-Civilization", Chronicles, June 2001.
18. *Ruth Gledhill, Christianity Almost Beaten, Says Cardinal,* London Times, September 6, 2001.